


[illegible][illegible]

64:609.400 6:069.439 6:303

1991 Փետրվար 2 Նորին
 Եկ լուսին Նորին Եկ
 Եկ լուսին Նորին Եկ



1896-1897

ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՐՔՈՒԹԵԱՆ

ԱՍՏԻՃԱՆ ԿԸ ՇՆՈՐՀԷ

Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ա. Օծուքիւմ Տ. Տ. Վազգէմ Առաջին Սրբազմագոյն Կաթողիկոսը "Արք"ութեամբ Աստիճամ շնորհեց Սրբոց Յակոբեանց Միաբանութեամբ Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Եպս. Սահակեանին, եւ Պատրիարքի Փոխանորդ Գեր. Տ. Յակոբ Եպս. Վարդանեանին:

Նորին Ամենապատուութիւն Պատրիարք Սրբազան Հայրը ստացաւ զոյգ կոմդակները Մարտիկի իր այցելութեամբ օրերում, Հոկտեմբեր 23-30, առաքուած Մայր Աթոռէմ, ձեռամբ Լիոնի Շրջանի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Գեր. Տ. Նորվան Եպս. Զարարեանին:

Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեամբ Պատրիարքարանի դահլիճը հրաւիրուեցաւ ամբողջ Միաբանութիւնը, Դիւանատան պաշտօնէութիւնը, Դաւիթ Սրբազանի ըմտամեկամ պարգանները, եւ Ժառանգաւորաց Վարժարանի մասնաւոր ուսանողները, Նոյեմբեր 13, Զորեքշաբթի երեկոյ, պաշտօնապէս ծանուցանելու եւ Կոմդակի յամձմուր կատարելու համար:

Կոմդակի ընթերցումը կատարեց Հոգ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէճեան: Պատրիարք Սրբազանը ակնարկելով Դաւիթ Սրբազանի մուիրեալ ծառայութեանց եւ տարբեր թեմերու մէջ ձեռք բերած փորձառութեանց, շեշտեց որ իբրեւ Լուսարարապետ ծանր պատասխանատուութիւնը ունի հսկելու Սուրբ Տեղեաց մէջ կատարուող պաշտամանց կանոնաւորութեամբ, մաւ Միաբանութեամբ ամղամբերու կեցեցողիւ եւ կրօնական պարտականութեանց կատարման:

Կոմդակի յամձմուրէն յետոյ, Դաւիթ Սրբազան իր երախտագիտութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Լուսարարապետի պաշտօնին հետ կապուած այս շնորհին համար, եւ յոյս յայտնեց որ իր միաբանակից եղբայրները պիտի թեթեւցեն իր ուսերում դրուած պաշտօնին ծանրութիւնը, հաւատարմօրէն կատարելով իրենց կրօնաւորի պարտականութիւնները, կանոնաւորաբար մասնակցելով պաշտամունքներում:

Ուրարակիր Կարապետ Յակոբեան իբրեւ Դիւանի պաշտօնէայ, Լուսարար Մայր Տաճարի, եւ "Մուխթար" հայ հասարակութեամբ, բոլորիմ ամուսնով բարի մաղթանքներ արտայայտեց: Ուսանողները եւ երեւանէն Ժառանգաւորաց Վարժարանի մէջ ուսուցանող դասախօսներու կողմէ դասախօս Պր. Ամդրամիկ Զէյթունեան իրենց մուէրները մերկայացուցին Դաւիթ Սրբազանին: Ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: